

**«Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից 2019թ.-ի ընթացքում իրականացված ծրագրերի մասին**

«Լոռու մարզային ենթակայության դպրոցներում 2019թ ակտիվ ընթացել են բնապահպանական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումներ, էքսկուրսիաներ, դիտողական արշավներ, դասեր, զրույց- քննարկումներ, իրազեկման, թափոնների հավաքման, տեսակավորման ակցիաներ և այլն: «Լոռու մարզային ենթակայության դպրոցները մասնակցել են համապետական, համայնքային շաբաթօրյակների, համայնքի պատմամշակութային հուշարձանների, գետերի առափնյա տարածքների մաքրման աշխատանքներ:

Վանաձորի թիվ 1 հիմնական դպրոցը մասնակցել է «Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի» կողմից կազմակերպված «Թափոնների երկրորդային մշակումը» > ծրագրին, որի ներկայացուցիչներն ավելի ուշ սեմինար են վարել դպրոցի 8-րդ դասարանցիների հետ:

Ալավերդու Կարապետ Դուլինյանի անվան N11 միջնակարգ դպրոցում սեմինար է անցկացվել «Էկոլոգիական խնդիրները բաց հանքերի հարակից տարածքներում» թեմայով:

Ձյունաշողի միջնակարգ դպրոցում բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ տեսաֆիլմի ցուցադրություն է իրականացվել (NABU) գերմանական հասարակական կազմակերպության կողմից:

Ստեփանավանի թիվ 6 միջնակարգ դպրոցում դաշտային հետազոտություն է իրականացվել Ձորագետ և Սևջուր գետերի միախառնման հատվածում, ջրի փորձանմուշի հետազոտություն՝ խոշորացույցի և համապատասխան աղյուսակի միջոցով: Աշակերտները մասնակցել են նաև «Կանաչ հմտություններ երիտասարդների համար՝ կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության համատեքստում» աշխատաժողովին:

Վանաձորի թիվ 19 հիմնական դպրոցը «Team Green» թեմայով նախագիծ է իրականացրել Իթվինինգի շրջանակներում: Ինչպես նաև դպրոցի ուսուցիչները մասնակցել են «Թափոնների մշակում», «Կլիմայական արկղիկ» «Կայուն զարգացման նպատակները» թեմաներով դասընթացների :

Մեղովկայի միջնակարգ դպրոցի սաները մասնակցել են «ԵՄ Կայուն էներգիայի օրեր 2019» բնապահպանական ծրագրի շրջանակներում Տաշիրի մշակույթի տանը կազմակերպված բնապահպանական միջոցառմանը, որի ընթացքում անցկացված մրցույթում աշակերտներից մեկը հաղթող է ճանաչվել: Նաև «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության Վանաձորի կենտրոնում մասնակցել են «Պլաստիկը պետք է արգելվի» թեմայով բանավեճին:

COAF-ի կողմից կազմակերպվել է 4 համայնքների դպրոցների աշակերտական խորհուրդների միջև մրցույթ: Մեծ Այրումի միջնակարգ դպրոցի աշակերտական խորհուրդը ճանաչվել է հաղթող և ստացել նվեր՝ գումարի տեսքով: Աշակերտները գումարը օգտագործել են համայնքում գեղեցիկ աղբամաններ տեղադրելու համար: 2019թ. COAF-ի կողմից կազմակերպված AFLATUN սոցիալ-ֆինանսական ծրագրին մասնակցել են դպրոցի աշակերտները և շահել 20.000 դրամ գումար: Գումարը օգտագործել են մանկապարտեզի ցանկապատը ներկելու և տարածքը բարեկարգելու համար:

Աշակերտները 2019թ մասնակցել են նաև «Դպրոցական էներգաաուդիտորների ջոկատներ» ծրագրի «էներգաարդյունավետություն», «էներգաաուդիտ» դասընթացներին, մշակել են իրենց ծրագրերը: